

ԱՐԵՒԵԼՔ-ԱՐԵՒՄՈՒՏՔ  
ՄԱՏԵՆԱՇԱՐ

 Գնժայագրեր...

անցյալի խոսույն վկայագրեր

(Հովհաննես Թումանյանի «Կենսագրության շտրիխներ»)

Նվիրվում է Հովհաննես Թումանյանի ծննդյան  
150-ամյա հոբելյանին

Երեւան 2019

ՀՏԴ 091.5  
ԳՄԴ 84(5Հ)  
Ը 452

Կազմող՝ Մ. Բաղդասարյան  
Խմբագիր՝ Ս. Աղամյան  
Համակարգչային ձևավորումը՝ Մ. Խաչատրյանի

Ընծայագրեր... անցյալի խոսուն վկայագրեր: (Հովհաննես Թումանյանի  
Ը 452 «կենսագրության շտրիխներ»).- Եր.: Հովհ. Թումանյանի թանգարան,  
2019.- 224 էջ:

Գրքում ներկայացված են Հովհաննես Թումանյանի ընծայագրերը՝ ուղղված իր շրջապատի անձանց, բանաստեղծին հղված ընծայագրերն անձնական գրադարանի գրքերի և լուսանկարների վրա, ինչպես նաև ընտանիքի անդամներին վերաբերող նույնատիպ նյութեր, որոնք բացահայտում են Հովհաննես Թումանյանի շփուժները ժամանակակիցների հետ:

ՀՏԴ 091.5  
ԳՄԴ 84(5Հ)

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

### Գրադարանս

*Բազմած են շուրջրս նրբանք ամեն օր –  
Բոլոր հանճարեղ մեծերն աշխատքի,  
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր  
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:  
Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,  
Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ շոր:*

### Հովհաննես Թումանյան

Թումանյանի կյանքում գրքին բացառիկ տեղ էր հատկացված: Նրա գրադարանը մի ամբողջ աշխարհ է՝ տարբեր լեզուներով բազմազան թեմաներով խոսող: Դա մի «համալսարան» էր ուսումը չավարտած բանաստեղծի համար. հայագիտություն, պատմություն, բանահյուսություն, կրոն, բժշկություն, փիլիսոփայություն, կովկասագիտություն, գեղարվեստ, գեղարվեստական գրականություն հայերեն, ռուսերեն և մի շարք օտար լեզուներով, բառարաններ և հանրագիտարաններ... շուրջ 10 000 գիրք, որից պահպանված 8000-ը խնամքով պահվում է Հովհաննես Թումանյանի թանգարանում: Նվարդ Թումանյանը գրում է. « Գրքի պաշտամունքը հայրիկի մեջ շատ էր ուժեղ: Գրադարանի գրքերը պահում էր խնամքով և ոչ ոքի չէր տալիս: Գրադարանից գիրք չխնդրելու հայտարարություն էր փակցրել, բայց երբեմն, մտերիմ մարդիկ խնդրում էին այս կամ այն գիրքը: Եվ նա զիջում էր, երբեմն էլ՝ նվիրում»:

Հրաշալի ավանդույթ էր այն ժամանակներում՝ գիրք նվիրել և արտահայտել իրենց ջերմ վերաբերմունքը, սերը և հարգանքը, նաև անկեղծ գնահատական ստանալու ակնկալիքը: Թումանյանի հարուստ գրադարանում բազմաթիվ այդպիսի նվերներ կան: Աշխատելով թանգարանում և ուսումնասիրելով թանգարանի հավաքածուն, թերթելով գրքերը, կարդալով ընծայագրերը՝ թե՛ Թումանյանի, թե՛ նրան հղված, ականա տեղափոխվում ես անցյալ՝ այդ սեղմ տողերի ետևում տեսնելով մարդկային հարաբերություններ, շփումներ: Ուստի և ցանկություն առաջացավ ներկայացնել դրանք ընթերցողների լայն շրջանին՝ հնարավորություն տալով վերապրել նույն զգացումները, բացահայտել բանաստեղծի շփումների լայն շրջանակները: Ներկայիս գիրքը, ավելի ճիշտ է ասել՝ այբոմը, գիտական

ուսումնասիրություն չէ, այն ամփոփում է նշված շփումների պատկերավոր պատմությունը: Կազմողի կողմից արված շարադրանքը հնարավորինս նվազեցված է, չեն տրված նաև մեկնաբանություններ: Բոլոր անձինք ներկայանում են հենց իրենց կողմից արտահայտված խոսքերով՝ նամակներից, հուշագրություններից և այլ հրատարակություններից վեր-հանված:

Գիրքը կազմված է մի քանի բաժնից:

Առաջին բաժնում ներկայացվում է թանգարանի բազմամյա պատմության ընթացքում հավաքված Թումանյանի ընծայագրերով գրքերը: Այն դեպքերում, երբ ներկայացվող անձը փոխադարձ նվերներ է հղել բանաստեղծին՝ գրքերի և լուսանկարների տեսքով, ամբողջական պատկերը չխաթարելու նպատակով, դրանք ներկայացվել են միասին: Այս բաժնում են ներառվել նաև բանաստեղծի՝ իր երեխաներին հղված ընծայագրերը:

Երկրորդ բաժնում ընդգրկված են Թումանյանին հղված ընծայագրերով գրքերը: Այստեղ ներառված են այն անձինք, որոնց հետ շփման փաստացի վավերագրերը /երկկողմանի/ պահպանվել են:

Երրորդ բաժինը ներառում է այն անձանց, որոնց հետ շփման մասին փաստացի արձանագրություններ չեն պահպանվել՝ բացառությամբ ներկայացված ընծայագրերի, ինչպես նաև խմբական մակագրություններ, կամ Հայ գրողների կովկասյան ընկերությանը հղված ընծաներ:

Առանձին, չորրորդ բաժնով, ներկայացվում է Կ.Պոլսում ստացած գրքերը՝ համապատասխան ընծայագրերով:

Բանաստեղծի գրադարանում կան նաև գրքեր՝ նվիրված տարբեր անձանց կողմից Թումանյան ընտանիքի անդամներին: Դրանք դեռ բանաստեղծի կենդանության օրոք դարձել են նրա գրադարանի «բնակիչներ»։ գրքերի վրա նրա աճնական գրադարանի կնիքն է: Հինգերորդ բաժինը տրամադրվել է այդ գրքերին:

Առանձին՝ վեցերորդ բաժնով ներկայացվում է մտերիմների լուսանկարները՝ բանաստեղծին հղված ընծայագրերով, որոնք նույնպես ժամանակի ավանդույթների կնիքն են կրում. միմյանց լուսանկար նվիրելը ջերմ հարաբերությունների հավաստիքն էր: Գրքի վերջում բերված է այլ արխիվներում պահվող Թումանյանի ընծայագրերով գրքերի ցանկը:

Հուսով ենք՝ ընթերցողը բավականություն կստանա՝ ծանոթանալով ներկայացված նյութերին, կբացահայտի Հովհաննես Թումանյանի բազմակողմանի և առեղծվածային կերպարի նոր կողմերը:

ՆՈՎ ՆԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ-ից

# Աղայան Դազարու (1840-1911)


Գրող, մանկավարժ, հրապարակախոս, Թումանյանի մտերիմ ընկերը,  
Վերնատան Նահապետը



Նրանք ծանոթացան, երբ երիտասարդ պոետը դեռ առաջին քայլերն էր անում գրականության մեջ, Աղայանը առաջիններից ողջունեց նրա մուտքը գրական ասպարեզ: Եվ գրեթե առաջին շփումներից սկսվեց նրանց առաապելական ընկերությունը, որի մասին գրել են ժամանակակիցներից շատ շատերը: Ափսոս, որ երկուսն էլ չտեսան իրենց ընկերության տրամաբանական շարունակությունը՝ Նվարդ Թումանյանի և Մուշեղ Աղայանի ամուսնությունը, որը տեղի ունեցավ 1938 թվականին:



## Ղ. Աղայան. Իմ կյանքի գլխավոր դեպքերը. – Թիֆլիս, 1893



Ղ. Աղայանը մի հոյակապ մարդ էր ու խոշոր մտածող, երազող, գրող: Բայց նրա կյանքը անգիր անցկացավ: Անցկացավ իր բարեկամների, ընկերների ու մտերիմների շրջանում, ու միայն նրանք գիտեն, թե ինչքան բան ուներ նա ու ինչքան բան տարավ իր հետ:

Նրա թողածը շատ է քիչ, տարածն ու կորածը ասհագին:

*Հովհաննես Թումանյան. «Հիրավի Աղայանը մեռավ»*


Դրանք ճիշտ որ երկու հսկաներ էին՝ մեր ժողովրդի էպոսի էջերից հանված, իրենց ժողովրդից դուրս եկած, իրարով էին ապրում, իրարով շնչում, ցավում ու ցնձում:

*Մուշեղ Աղայան. «Դազարու Աղայանն ու Հովհաննես Թումանյանը»*

*Իմ սիրելի Հովհաննես  
Թումանյանին  
Ղ. Աղայան*




Հովհ. Թումանյան. Բանաստեղծություններ.–  
Թիֆլիս, 1903



Մեր ակզիկն Աստուծոյ  
Ն, Արսույանին,  
Հովհաննէսեանց

905. հունվարի 1.



Աստուծոյ հիշատակը, իմեզից և Թումանյանից  
Աստուծոյ հիշատակը մեր ակզիկն ուրիշ:



Տարեմուտի երեկոյան ճեմարանումը հանդես էր: Կարդացին և թո «Շունն ու կատուն», շատ լավ կարդացին, բոլ ծիծաղեցինք: Չէ՛, Աստուծոյ չար աչքից փրկի, և մեկ էլ նոր աշխույժ և եռանդ տա, ձավար չանես, միշտ լավ աղաս, չհափշտակվես, խելքդ գլխիդ պահես, ազգային և ժողովրդական հողից չհեռանաս, քիչ կարդաս, շատ մտածես, ոգևորութեան բոլորից օգուտ քաղես, հորանջելով չգրես ոչինչ, այլ երկաթը միշտ տաք-տաք ծեծես:

Ղազարոս Աղայան  
1894 թ. հունվարի 11-ի նամակից,  
Էջմիածին – Թիֆլիս

Նա ունեցել է խոր հավատ ու հարգանք դեպի իր գրիչը, գրիչը համարել է մի սրբազան արարողություն, գրիչ առնելիս կարողացել է վերանալ, և նրա բանաստեղծական աշխատանքն էլ եղել է միշտ վեհ, իդեալական, մաքուր, մանկական:

Հովհաննէս Թումանյան  
«Ղ. Աղայան (Քառասունամյակի օրը)»




Մեր տան թանաղան Ադայանն էր: Հայրիկի կենացին միշտ երգում էր «Քյորդլին», հետո գրկախառնվում էին ու համբուրվում: Սպիտակ անձեռոցիկ էին փռում կրծքներին ու ախորժակով, զվարթ ճաշում:

*Նվարդ Թումանյան. «Հուշեր և գրույցներ»*



*Մմ սիրելի Հովհաննեսին 1898*



**Ղ. Ադայան. Ուսումն մայրենի լեզվի.-  
Թիֆլիս, 1906**

Շատ նման էին նրանք իրար. երկուսն էլ միևնույն աստղծից, հայ ժողովրդի նյութից կերտած և միևնույն ոճով ձևավորված: Նաև մեծ մտերմություն տեսա նրանց միջև, իսկ հետագա տարիներում համոզվեցի, որ ամբողջ աշխարհում նրանք իրար ամենամոտ մարդիկն են: Օհաննեսը նրան կոչում էր «Ասլան ապեր», նա էլ Օհաննեսին՝ «Ասլան բալասի», հետո երկուսով ծիծաղելով, ասում էին. «Էլ ո՞վ կարող է մեզ հաղթել»:

*Ավետիք Իսահակյան.  
«Հովհաննես Թումանյան»*



*Մմ սիրելի Ասլան - Բաղսին  
Ասլան Ապրիկյ.  
23-և օգոստ*

*Մմ սիրելի Ասլան - Բաղսին  
Ասլան Ապրիկյ:  
III, 19, 1906.  
Թիֆլիսից - Ղևտղ*




Ով չի տեսել նրան՝ էլ ճանաչել չի կարող, պատմելով էլ չի կարելի ծանոթացնել:

Այո՛, պատմելով չի կարելի ծանոթացնել գոնե էն տեսակ մարդկանց հետ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ սիրտ ու հոգի:


Էնպես, ինչպես վաղուց երգված ու լռած մի երգ, որ պատմելով չի կարելի վերականգնել: Էնպես, ինչպես վաղուց ցնդած մի բուրմունք, որ նկարագրելով չի կարելի նորից հավաքել ու տալ:

*Հովհաննես Թումանյան.  
«Հիրավի Աղայանը մեռավ»*



*Մտ սիրելի Հովհաննեսին  
ի հիշարակ սևվերգ բարեկամության.  
31-ն Սարգի 1898. ՎԻՖԻԿԻ*

**Հովհ. Թումանյան. Քառյակներ. –  
ԹԻՖԼԻՍ, 1920**



*Քր Աղայանին հետիևսկր  
1920 17 սար. ՎԻՖԻԿԻ*

Ղազարոս Աղայանը՝ կապված լինելով Հովհաննես Թումանյանի հետ մի աննման ջերմեռանդ, հրաբորբոք սիրով, սիրում էր և նրա երեխաներին, ինչպես գիտեր առհասարակ սիրել երեխաներին և սիրելի դառնալ նրանց: Նա մի տեսակ սրբություն էր Հովհաննեսի ընտանիքի համար և առանց նրան տեսնելու չէր կարող երկար մնալ: Ասենք Ղազարոսի սրտի մեջ թույլ, կիսատ-պռատ, պաշտոնական սեր բնավ չկար: Ում որ սիրեր, կսիրեր ամբողջ սրտով, ջերմորեն... Հովհաննեսն էլ, իհարկե, փոխադարձ ջերմությամբ էր պատասխանում Ղազարոսին: Միասին երկուսը շատ քաղցր ու ծանր օրեր էին քաշել, միմյանց միացել հոգով ու սրտով:

*Լեո. «Հիշողություններ  
Հովհաննես Թումանյանի մասին»*

# Բզնունի Հնայակ


Պարսկահայ վաճառական, որի հետ Թումանյանը ծանոթացել և մտերմացել է 1917 թվականին Պյատիգորսկում:



1917 թ. ամռանը Թումանյանը մեկնեց Պյատիգորսկ հանգստանալու և բուժվելու: Այստեղ էլ ծանոթացավ և մտերմացավ իր երկրպագուներից մեկի՝ Հնայակ Բզնունու հետ, և ի նշան այդ բարեկամության նվիրեց նրան «Անուշի» 1916 թ. հրատարակությունը:



Հովհաննես Թումանյան  
Պյատիգորսկ, 1917 թ.



*Մի ապեիվ - փեւեթ բարեկամիսն՝ Հնայակ Բզնունուն  
Հ.Թումանյան*

*30 սեպտ. 1917  
Պյատիգորսկ*

Մի բարեկամ ունենք – Բզնունի, որ ամեն բան օգնում է, ամեն տեսակ լավություն անում, շաբաթը երկու անգամ էլ ճաշի հրավիրում, շատ էժան էլ ամեն տեսակ ապրանք տալիս:

*Հովհաննես Թումանյան  
1917 թ. հուլիսի 10-12-ի  
Օլգա Թումանյանին գրած նամակից,  
Պյատիգորսկ – Թիֆլիս*